ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Աջակցություն ԵՄ Արևելյան գործընկերության երկրներին՝ ակտիվների վերականգնման գործում

Իրականացման ժամանակահատված: 01.04.2020 - 31.03.2023

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 1 500 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNICRI

Նախագծի կայքէջ: unicri.org

Նախագծի նկարագրություն:

«Աջակցություն ԵՄ Արևելյան գործընկերության երկրներին՝ ակտիվների վերականգնման գործում» ծրագիրն ընդլայնում է արևելյան գործընկեր երկրների՝ կազմակերպված հանցավոր գործունեության հետ կապված ակտիվներին հետևելու ու առգրավելու և դրա արդյունքում ստացված միջոցները զարգացման գերակա առաջնահերթություններին, այդ թվում՝ առողջապահության և կրթության ոլորտներ ուղղելու կարողությունը:

Ակնկալվող արդյունքներ:

- Ֆինանսական հետաքննիչների՝ կազմակերպված հանցավոր շրջանակների տիրապետած ակտիվների հետքերը գտնելու, սառեցնելու, առգրավելու, բռնագրավելու և վերականգնելու կարողությունների ամրապնդում.
- Արևելյան գործընկեր երկրների առանցքային պաշտոնյաները կօգտվեն ՄԱԿ-ի Հանցավորության և արդարադատության հարցերի միջտարածաշրջանային գիտահետազոտական ինստիտուտի (UNICRI) փորձից՝ կարիքների մանրակրկիտ գնահատման և նեղ մասնագիտական ուսուցման միջոցով.
- Կարողությունների զարգացման փաթեթի մաս կկազմեն առանցքային խնդիրների հաղթահարմանն ուղղված կոլեգիալ մենթորությունը և կանոնավոր իրավաբանական խորհրդատվությունը, ինչպիսին ակտիվների առգրավման և բռնագրավման համար անդրսահմանային համագործակցությունն է: